Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում համայն մեր ժողովրդին՝ Հաղթանակի տոնի և Շուշիի ազատագրման օրվա առիթով:

Հայրենասիրության ու անձնվիրումի փառապանծ վկայություններով և հերոսների անմահ հիշատակի ոգեկոչումով ենք նշում Հաղթանակի տոնն ու Շուշիի ազատագրումը՝ աղոթքով հիշելով խաղաղ ապրելու ձգտումով ու կամքով պայքարած բոլոր նվիրյալներին:

Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում մեր Սուրբ Եկեղեցու օրհնությամբ են հաղթանակներով պսակվել Հայրենիքի պաշտպանների ջանքերը՝ հանուն նոր կյանքի հույսերի ու ազգային իղձերի իրականացման:

Ի խորոց սրտի աղոթում ենք փառքով զոհվածների հոգիների հանգստության համար և հայցում Բարերար Աստծուց, որ խաղաղ պահի աշխարհը, մեր Հայրենիքը և ամենառատ Իր օրհնությամբ հաստատի ժողովուրդներին սիրո ու եղբայրության մեջ:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
9 մայիսի 2006 թ.